

րա հիման 10 § կանոնաց վան կառավարելոյ զտունն աղքատանցին առաջարկեալ եղև վասն վերագննութեան Հայ Հասարակութեան Սոսկուայի ի ժողով ընդհանուր ի 23 անցեալ Մարտ ամսոյ որ յետ վերադննութեան ի ձեռն ընտրեալ ի միջոյ ի բնանց երկց անձանց և բազդատելոյ զվկայապիս ընդ հաշուց եզիտ զհաշիւան ուղիղ և համաձայն ընդ վկայագրոցն, իսկ գրամագրուին Աղքատանցի առ ձեռն պատրաստ զորմէ կազմեալ եղև ի 23 նոյն ամսոյ սահմանագրութիւն ընդհանուր ժողովոյն ստորագրեալ յամենայն Անդամոց Հասարակութեան անդ ներկայ եղելոց և

Ե.) Կրկին ընտրեցաւ ի ժողովոյ վասն վարելոյ զպաշտօն Անդամոյ խորհրդարանի տոհմական քաղաքի Պ. Ջանուսեանն, զորմէ կազմեցաւ արձանագրութիւն ի 23 Մարտի,

Պ Ա Ր Տ Է Ջ

Մի պարտեղ կար ընդարձակ, հողք բերրի, ջուրն առատ, Թէ երկնքի անուշ ցող, Թէ արեւու լոյս զուարթ, Թէ բիր տեսակ երգեցիկ թռչունների դայլայիկ
 Բաշխումէին նորան կեանք միշտ ուրախ, միշտ երջանիկ,
 Հազար ու մի պողատու և տիտանի ծառերով
 Գրախտի պէս զարդարուած, պատած ամուր պարսպով
 Այցելունքն անպակաս միշտ երանի կայսին
 Նորա տիրոջ, որ այնպէս պարտեղ ուներ թանկագին,
 Անցան տարեք ու զարեր, տկարացաւ սորա տեր
 Պակասեցան սրտացաւ և հարազատ մշակներ
 Նորա ազա՛հ այցելութ և նախանձոտ դրացիներ
 Կործանեցին, քանդեցին նորա պարիսպ ու դռներ
 Այն պողատու ծառերի կանաչ, դալար ոստիկներ
 Գարձան այլոց պարտեղում բազմաբեղուն պատուաստներ
 Նորա առատ ջրերի ընթացքները փոխվեցան,
 Օտար պարտեղ և այգի տուղանել սկսան,
 Իսկ երգեցիկ թռչունները, չգանելով նորանում
 Հանգչելու տեղ, չուցին հետու տեղեր շինել ընդն
 Այսպէս ահա՛, մեծաշուք և վայելուչն այն դրախտ
 Ազատութիւն և նախանձ զարձուցին չոր անապատ,
 Ես չկամիմ բացաղբել, դուք հասկացէք, ով հայեր,
 Թէ ի՞նչն է այս դրախտանման պարտեղը, և թէ ո՞վքեր
 Սորա ազա՛հ, նախանձոտ այցելութն ու դրացիներ,
 Եւ գործեցէք այն՝ ինչ որ պահանջումեն Ձեր շահեր,
 Ս. Վ.